ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ « ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում»

Անցկացման վայր՝ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Մարգարիտ Ղազարյան

Դպրոց՝ Վարդենիկի թիվ 2 հիմն. Դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ 2022

Ներածություն

Աշխարհագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում գիտությունների համակարգում: Աշխարհագրության ուսումնասիրության նպատակն է բացահայտել, վերլուծել բնական և հասարակական երևույթների տարածական օրինաչությունները ու տարբերությունները, տարբեր աշխարհահամակարգերի և դրանց առանձին բաղադրիչների մեջ եղած փոխադարձ կապերը:

Աշխարհագրության ժամանակակից ընկալումը էապես տարբերվում է ավանդական ընկալումից, երբ աշխարհագրությունը միայն երկրի նկարագրությամբ զբաղվող գիտություն էր: Այժմ աշխարհագրությունը նկարագրական և ճանաչողական գիտություն լինելուց վերածվել է վերափոխիչ-կառուցողական բնույթի գիտության: Բնական միջավայրի խելամիտ օգտագործման ու վերափոխման ուղիների բացահայտումը դարձել է աշրհագրության գլխավոր խնդիրը:

Ընդհանուր աշխարհագրությունը ձևավորվում և զարգանում է երեք հիմնական ուղղություններով:

Առաջինը բնության և հասարակության փոխազդեցության ուսումնասիրման և վերլուծության ուղին է:

Երկրորդը երկրագրական և տարածաշրջանային վերլուծության ուղին է:

Երրորդը բնական և հասարակական երևույթների տարածքային վերլուծության ուղին է:

Աշխարհագրության արդի զարգացման միտումներն են մարդկայնացում, սոցիալականացումը, էկոլոգացումը, տնտեսագիտացումը, մաթեմատիկացումը և համաշխարհայնացումը: Հետևաբար ընդհանուր աշխարհագրության գլխավոր խնդիրը բնական, հասարակական և բնապահպանական տարածական տարբեր համակարգերի զարգացման գործոնների փոխադարձ կապերի և օրինաչափությունների բացահայտումն է:

Արդի աշխարհագրության ուսումնասիրության գործընթացում կարևոր է սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում:

Աշխարհում երևույթների, դեպքերի, իրադարձությունների, առարկաների էական հատկանիշների, օրինաչափությունների, պատճառահետևանքային կապերի ընկալման, գիտակցման համար կարևոր են դրանց բազմատեսանկյուն դիտարկումը, տեղեկույթի վերլուծությունը, համակարգումը, գնահատումը, փաստարկումը, եզրահանգումը, հաղորդակցումը, բանավիճելու մշակույթը և այլն: Այս գործընթացները պահանջում են անձի քննադատական մտածողության ձևավորվածություն: Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Քննադատական մտածողության հիմնախնդիրը ձևավորվել է դեռևս անտիկ փիլիսոփայության ակունքներում: Մեթոդաբանական նշանակալի դեր ունեն Ջ. Դյուիի հայացքները ռեֆլեքսիվ մտածողության վերաբերյալ: Այդ ոլորտում համակողմանի հետազոտություն է իրականացրել ամերիկացի հոգեբան Դ. Հալփերնը: Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաները հետազոտվել են Ջ. Սթիլի, Կ. Մերեդիթի, Չ. Թեմփլի, Ս. Ուոլթերի կողմից: Մ. Լիփմանը ստեղծել է քննադատական մտածողության ամբողջական հայեցակարգ՝ սահմանելով նրա բնութագրիչները, բաղադրատարրերը, փուլերը, գործառույթները, գործոնները: Քննադատական մտածողության նպատակներին, կառուցվածքին, բաղադրիչներին, զարգացման չափանիշներին են նվիրված Ս. Բրուկֆիլդի, Ս. Ի. Վեքսլերի, Լ. Ս. Վիգոտսկու, Ա. Ն. Լեոնտևի, Դ. Ռասսելի, Կ. Պոպպերի հետազոտությունները: Բարձրագույն մասնագիտական կրթության խնդիրների համատեքստում քննադատական մտածողության զարգացման տեսագործնական հարցերն ուսումնասիրել են Ե. Ի. Ֆեդոտովսկայան, Ա. Վ. Կորժուևը: Տարիքային տարբեր կենսափուլերում քննադատական մտածողության զարգացման հիմնախնդիրը հետազոտել են Ե. Ա. Մուխինան, Ֆ. Ֆ. Մինկինան: Քննադատական և ստեղծագործության մտածողության հարցերը դիտարկել են Ջ. Գիլֆորդը, Ս. Լ. Ռուբինշտեյնը: Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:

Ինքնուրույն մտածողություն

Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ: Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ,

մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝ կանխորոշում են ուսումնառության նպատակները, հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման, նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով, ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը: Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել: Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է զարգացնել ուսումնառության ընթացքում:

Ինքնուրույն մտածողության կարևորությունը ուսումնական գործընթացում

Արդի ժամանակաշրջանը՝ իր գիտակրթական տեղաշարժերով ու զարգացումներով, նոր առաջնահերթություններ է թելադրում կրթական գործընթացում: Դպրոցի գերակա խնդիրն է աշակերտներին ոչ թե պատրաստի գիտելիք փոխանցել, այլ սովորեցնել մտածել, տեղեկույթը վերլուծել, քննարկել, իր կարծիքը հիմնավորել, հարցադրումներ անել, բանավիճել, քննադատաբար վերաբերվել այն ամենին, ինչ կարդում են, լսում տեղեկատվական հեղեղի արդի պայմաններում: Քննադատական մտածողությունը ճանաչողական գործընթաց է, որը վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկույթի վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով : Քննադատական մտածողությունը տրամաբանական, ստեղծագործական մտածողության յուրահատուկ համադրում է: «Քննադատական մտածողությունը ներառում է մտածական գործառությունները, որոնք որոշում են դատողությունների և փաստարկումների գործընթացները՝ նպատակադրումը, հիմնախնդրի բացահայտումը, վարկածի առաջադրումը, փաստարկներ բերելը, հիմնավորելը, հետևանքների կանխատեսումը, այլընտրանքային տեսակետներն ընդունելը կամ չընդունելը: Այն ներառում է իմացական հիմնական կարողությունները (գիտելիք և ըմբռնում) կիրառելու ունակությունը բարդ և ոչ միանշանակ իրավիճակների ու հիմնախնդիրների համադրման, վերլուծության և գնահատման համար : Ըստ Դ. Հալփերնի՝ «քննադատական մտածողությունը ճանաչողական տեխնիկաների ու ռազմավարությունների կիրառումն է, որոնք մեծացնում են ցանկալի վերջնարդյունքի ստացման հավանականությունը: …Երբ մենք քննադատաբար ենք մտածում, գնահատում ենք մեր մտածական գործընթացների արդյունքները. որքանով ենք ճիշտ որոշում կայացրել կամ ինչ հաջողությամբ ենք լուծել առաջադրված խնդիրները: Քննադատական մտածողությունը ներառում է նաև

հենց մտածական գործընթացների գնահատումը՝ դատողությունների ընթացքը, որոնք հանգեցրել են մեր եզրահանգումներին, կամ այն գործոնները, որոնք մենք հաշվի ենք առել որոշումների ընդունման ժամանակ» :

Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է հանրակրթության բոլոր աստիճաններում, ընդսմին յուրաքանչյուր աստիճանում ունի իր խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները, աշխատանքի կազմակերպման ձևերը: Ավագ դպրոցական տարիքում քննադատական մտածողության զարգացումն առավել է կարևորվում. պատանեկության կենսափուլում առաջնային են դառնում կենսական խոր բովանդակությամբ հարցադրումները, մասնագիտական կողմնորոշումները, աշխարհի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, ինքնահաստատման, ինքնադրսևորման, ճանաչողական գործունեության նոր ձևերի տիրապետման պահանջմունքը, որոնք պահանջում են քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտություն: Ուսումնական գործընթացում կարելի է առանձնացնել քննադատական մտածողության զարգացման հետևյալ գործոնները՝ դրդապատճառային՝ հետաքրքրությունն ուսումնասիրվող նյութի նկատմամբ, կազմակերպչական-մեթոդական՝ աշխատանքի կազմակերպման ձևերը, մեթոդները, միջոցները, եղանակները, դասավանդողի մասնագիտական կոմպետենցիաները, տեղեկատվական՝ տպագիր և էլեկտրոնային աղբյուրների մատչելիությունը, հասանելիությունը, դրանցով աշխատելու կարողությունների զարգացումը, հաղորդակցական՝ փոխներգործուն միջավայրի ձևավորումը, ռեֆլեքսիվ-գնահատողական՝ իր և այլ անձանց տեսակետների համարժեք գնահատումը, հետահայաց անդրադարձն ու վերլուծությունը: Քննադատական մտածողության զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովում են մանկավարժական մի շարք պայմաններ՝ ուսումնական նյութի պրոբլեմային բնույթն ու տեղեկատվական հագեցվածությունը. հնարավոր է քննարկել, ապացուցել, փաստարկել այն նյութը, որը հիմնված է կոնկրետ փաստերի, տվյալների, աղբյուրների վրա, տեղեկույթի գիտականությունը, արժանահավատությունը, արդիականությունը, սոցիալական նշանակությունը,

այսինքն՝ ուսումնական նյութում կենսական հիմնախնդիրների, սոցիալական նշանակություն ունեցող հարցերի արտացոլումը, ուսումնական տեղեկույթի, թեմայի հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության արթնացումը, ուսումնական դրդապատճառների ձևավորվածությունը. եթե սովորողը ցանկանում է իմանալ, ըմբռնել, իմաստավորել, խորանալ նյութի բովանդակության մեջ, ապա նա ստեղծագործական վերաբերմունք է դրսևորում, փորձում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից քաղել լրացուցիչ տեղեկույթ, համեմատել, համադրել, եզրահանգումներ անել, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում քննադատական մտածողությանը նպաստող բաղադրիչի կարևորումը, կրթական գործընթացի հաղորդակցական բնույթը, ինտերակտիվ միջավայրի ձևավորումը. քննադատական մտածողությունը զարգանում է բանավեճի, քննարկումների արդյունքում: Կարևոր է, որ սովորողներն ազատ, առանց սխալվելու վախի արտահայտեն իրենց տեսակետը հանդուրժողականության և փոխըմբռնման մթնոլորտում: Այս առումով ուշագրավ է Դ. Կլուստերի այն դիտարկումը, որ քննադատական մտածողությունը սոցիալական բնույթ ունեցող մտածողություն է. ցանկացած միտք ստուգվում և հղկվում է, երբ քննարկվում է ուրիշների հետ , խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը, խմբային աշխատանքի խրախուսումը. աշխատանքը փոքր խմբերում թույլ կտա առավել վստահ լինել ու նեղ շրջանակում արտահայտել կարծիքը. խմբային տեսակետում կհամադրվեն խմբի անդամների անհատական տեսակետները, իսկ տվյալ աշակերտը ձեռք կբերի համարձակություն և կունենա վստահության զգացում: Ավագ դպրոցում սովորողների քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները, աշխատանքի ձևերը՝ աշխատանքում, ուսումնական և կենսական իրավիճակներում, գործնականում սովորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու, պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն, տարբեր թեմաներին նվիրված էսսեները, գիտական,

գիտահանրամատչելի նյութերի վերաբերյալ կարծիքները, համառոտ և ընդարձակ գրախոսությունները, երկրում, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, կրթական, մարզամշակութային հարցերի վերաբերյալ քննարկումները, խոսքի՝ համապատասխան ոճին բնորոշ լեզվաքերականական միջոցներով համարժեք ձևակերպումները, գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների, արդիական թեմաների վերաբերյալ համացանցային նյութերի քննարկումները, այդ նյութերի արժանահավատության ստուգումը տարբեր աղբյուրներով, գրքի, ֆիլմի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը, տեքստի առանցքային գաղափարի առանձնացումը, վերլուծությունը, ընդհանրացումը, կենսական իրավիճակներից կամ անձնային փորձից վերցված օրինակներով մեկնաբանումը, ստեղծագործաբար զարգացումը, կանխատեսումը, անդրադարձը, ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է կրել բազմազան բնույթ՝ քննադատական կարծիք, վերլուծություն, հավանություն, հերքում, ներկայացում, գնահատում, հիմնավորում, ապացուցում, միևնույն հիմնախնդրի՝ տարբեր տեսանկյուններից մեկնաբանումը (ստույգ փաստեր, հուզական-գնահատողական մոտեցում, դրական կողմերի, զարգացման հեռանկարների նախանշում, առաջարկություններ, լուծումներ), իր և ուրիշների կարծիքների համեմատումը, հակադրումը, համադրումը, զուգահեռների անցկացումը, անհատական կարծիքների հիման վրա խմբային կարծիքի ձևավորումը, եզրահանգումը, անհատական և խմբային մակարդակում արժևորումը, արտահայտված տեսակետների ընդհանրացումը, միտումնավոր սխալներով, փաստերի խեղաթյուրմամբ շարադրանքի հանձնարարում, որպեսզի սովորողներն ինքնուրույն գտնեն սխալները, շտկեն, հիմնավորեն, բանավեճերը տեղեկույթի քննադատական վերլուծության, փաստարկումների և ապացույցների հիման վրա ձևավորում են տեսակետն արտահայտելու կարողություն, միևնույն թեմայի վերաբերյալ պատմողական, նկարագրական, դատողական շարադրանքները,

ուսումնահետազոտական նախագծերը, խմբային քննարկումները, քեյսերը, դերախաղերն ու գործնական խաղերը, գիտագործնական կոնֆերանսները, առցանց ֆորումները: Հանձնարարելի են հետևյալ թեմաներով ուսումնահետազոտական նախագծերը՝ համամոլորակային և տարածաշրջանային տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-մշակութային հիմնախնդիրների առանձնացում, դրանց լուծման վերաբերյալ կազմակերպությունների գործունեության, փաստաթղթերի վերլուծություն, կրթական զարգացումներն ապագայում.

ՏՀՏ-ների կիրառումը կրթության ոլորտում. անձի սոցիալականացման և միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման խնդիրը, գլոբալացման գործընթացները տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական, մշակութային ոլորտներում, էթնիկ և գլոբալ ինքնություն. ազգային-մշակութային անհատականության պահպանման հիմնախնդիրը. որոնումներ, լուծումներ, ապագայի տեսլականը, ժամանակակից տեղեկատվական աշխարհում սեփական հայացքների, համոզմունքների, կողմնորոշումների, դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը, սոցիալական ցանցերի դերը միջանձնային, միջմշակութային հաղորդակցման գործում: Ուսումնահետազոտական աշխատանքը նախատեսվում է որոշակի ժամանակահատվածում անհատական կամ խմբային ձևով, օրինակ՝ ուսումնական կիսամյակ, շաբաթ, տվյալ դասի շրջանակներում: Արդյունքները ներկայացվում են տարբեր ձևերով ու միջոցներով՝ շարադրանք, թղթապանակ, հաշվետվություն, տեսահոլովակ, սահիկաշար, զեկուցում, հաղորդում, պաստառներ, նկարազարդումներ, աղյուսակներ, տրամագրեր և այլն: Աշխատանքի գնահատման չափանիշներ են տեղեկույթի տիրապետման մակարդակը, հիմնախնդրի ընկալումն ու մեկնաբանումը, լուծման տարբերակների բազմազանությունը, ստեղծագործական մոտեցումը, տեղեկատվական աղբյուրների ընտրությունը, ձևակերպումների ճշգրտությունը, տրամաբանվածությունը, եզրակացությունները, կառուցողական առաջարկությունները, ներկայացման միջոցները, թիմային աշխատանքի հմտությունները:

, ինչպես սույն հետազոտությունը, այնպես էլ մեթոդի կիրառությունն ունի նաև սահմանափակումներ. Ա. Պատմական և քննադատական մտածողության զարգացումը հեռահար և երկարաժամկետ նպատակ է, իսկ հետազոտությունը կատարվել է ընդամենը մի քանի դասի ընթացքում, ինչը հնարավորություն է տալիս խոսել տվյալ միջամտության շնորհիվ սովորողների քննադատական, պատմական մտածողության բարելավման, զարգացման հնարավորության մասին: Բ. Մեթոդը կիրառվել է մի դպրոցում, որտեղ սովորողների ակտիվ մասնակցությունը դասերին առավել նորմա է, քան բացառություն: Դա հնարավորություն տվեց սկսել մեթոդի կիրառումը մեկ նախապատրաստական դասից հետո և միանգամից երեք-չորս աղբյուրի կիրառությամբ: Դասերի ընթացքում առաջացած բարդությունները հիմնականում հաղթահարվում էին ուսուցչի՝ ժամանակին և տեղին ուղղորդումներով, հուշող հարցերով: Հավանական ենք համարում, որ այլ դեպքերում ավելի մեծ թվով նախապատրաստական դասեր կարող են պահանջվել. հնարավոր է սկսել դասագրքից բացի մեկ լրացուցիչ աղբյուրից՝ հետզհետե ավելացնելով դրանց քանակը: Գ. Մեթոդի կիրառությունը խիստ ժամանակատար է թե՛ ուսուցչի համար, թե՛ դասարանում իրականացնելու տեսանկյունից, թեև այդ ժամանակատարությունը փոխհատուցվում սովորողների ոգևորությամբ և ներգրավվածությամբ, նրանց հմտությունների զարգացման հեռանկարով: Այս խնդիրը մասամբ կարող է լուծվել դասագրքերին կից հայերեն աղբյուրների ժողովածուների ստեղծմամբ: Դ. Մեթոդի կիրառությունն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, երբ ուսուցիչը տիրապետում է բազմակի աղբյուրների հետ աշխատանքի հմտություններին, հակառակ դեպքում այն ձևական բնույթ կարող է կրել: Ուստի դրա կիրառությունից առաջ ուսուցիչները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն:

Ինքնուրույն, նախաձեռնողական մտածողության այլ երկրների փորձը

Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց քննադատական մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո : Նրանք սկսել էին ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով, ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անել, կարողանալ գնահատել հակադիր փաստարկները, բազմակողմանիորեն գնահատել, հաշվի առնել անորոշության գործոնը: Նրանք նշել են նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր էվրիստիկ մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ: Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման : Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական

մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ : Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում….: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի հիշողություն փոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծությունհամադրում-

գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ : Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ : Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը: Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ

պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը: Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա: Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի 72 պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը,պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

Ինքնուրույն մտածողության ուսուցման դասի պլանի երկու օրինակ աշխարհագրություն առարկայից

Դասապլան 1՝

Առարկա	Աշխարհագրություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	7-րդ
Խմբի բացվածք	Աղջիկ -6, Տղա – 14, ՕՀԿ, ՈՒՏԿ						
Թեմա	Բնակչության վերարտադրություն						
Օգտագործվող նյութեր	7-րդ դասարանի դասագիրք, քարտեզ, տետր,պաստառներ, կպչուն թղթեր						
Ամբողջական պատկեր	Աշակերտները նախորդ դասին ուսումնասիրել են ինչ է բնակչությունը, ծանոթացել բնակչության թվին և շարժին: Թվաքանակի փոփոխության դինամիկան ժամանակի ընթացքում						
Դասի նպատակ	• Իմանալ բնակչության վերարտադրությունը • Վերարտադրության ռեժիմ • ծնելիության և մահացության գործակիցներ • բնական աճի գործակից • ժողովրդագրական քաղաքականություն						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն որ ուսուցումը տեղի է ունեցել							
Վերջնարդյունքները	• Կարողանալ սահմանել բնակչության վերարտադրությունը • Կարողանալ լուծել թեմային վերաբերվող խնդիրներ • Տարբերակել բնակչության վերարտադրության ռեժիմները • Կարողանալ վերլուծել ժողովրդագրական քաղաքականությունը						
Ուսուցչի զարգացման ընացիկ թիրախներ			Նպատակներին հասնելու ռազմավարություն				
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում			Նախատեսում եմ խմբային աշխատանք արձանագրելով յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան				

Գործողությունները (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ
Մուտք, ներկա-բացակա - 3ր Սկիզբը – 5-7ր	Աշակերտները բաժանվում են խմբերի և պատասխանում են իրենց առաջադրված հարցերին	Մտագրոհ է անում բարդությունների վերաբերյալ հարցերի միջոցով փորձում է հիշեցնել նախորդ դասերին անցածը: Խմբերը այնպես դասավորել, որ ընդգրկվեն տարբեր կարողություն ունեցող աշակերտներ	Ի՞նչ է բնակչության վերարտադրությունը Քանի՞ տեսակ են լինում բնակչության վերարատադրության ռեժիմները և տիպերը: Ի՞նչ է ժողովրդագրական քաղաքականությունը, պայթյուն և ճգնաժամ: Ո՞ր երկրներին է բնորոշ ճգնաժամը, և ո՞ր երկրներին՝ պայթյունը: Չափորոշիչներ. Դասի ընթացքում ուսումնասիրված հասկացությունների իմացություն և խնդիրների լուծում
Ընթացք – 20ր	Յուրաքանչյուր խումբ կատարում է իրեն առաջադրված պահանջները և ներկայացնում նախօրոք հավաքած տվյալները և լուծված խնդիրները: Խմբի անդամները մյուս խմբերին ուղղում են պրոբլեմատիկ հարցեր	Յուրաքանչյուր խմբին տալիս է հանձնարարություն. 1-ին խումբ ներկայացնել բնակչության վերարտադրություն և լուծել առաջադրված խնդիրը: 2-րդ խումբ բնութագրել բնակչության վերարտադրության ռեժիմները, լուծել առաջադրված խնդիրը: 3-րդ խումբ բնութագրել բնակչության վերարատադրության տիպերը և լուծել առաջադրված խնդիրը 4-րդ խումբ բնութագրել ժողովրդագրական քաղաքականությունը և տեսակները: Լսում է խմբերի վերլուծությունը	

10ր	Լսել ուսուցչին և համագործակցել ուսուցչի հետ	Բացատրում է նոր դասը աշակերտների ներգրավվածությամբ	
Ավարտ 5ր		Ամփոփել դասը, վերլուծել ինչ սովորեցինք, ինչ գիտեինք	

Դասապլան 2՝

Առարկա	Աշխարհագրություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	7-ր դ
Խմբի բացվածք	Աղջիկ -6, Տղա – 14, ՕՀԿ, ՈՒՏԿ						
Թեմա	Բնական պայմաններ և բնական ռեսուրսներ: Բնական ռեսուրսների խմբավորումը						
Օգտագործվող նյութեր	7-րդ դասարանի դասագիրք, քարտեզ, տետր,պաստառներ, կպչուն թղթեր						
Ամբողջական պատկեր	Աշակերտները նախորդ դասին ավարտել են բնակչություն թեմայի ուսումնասիրությունը, այս դասին ամփոփում են, ամբողջացնում ենք այդ թեմայի գիտելիքները: Այս դասին կծանոթանան և մանրամասն կվերլուծեն բնական պայմանները և ռեսուրսները: Կծանոթանան ռեսուրսաապահովվածությանը և կլուծեն խնդիրներ						
Դասի նպատակ	• Սահմանել ինչ է բնական ռեսուրսը և թվարկել դրանց տեսակները • Սահմանել ինչ է բնական պայմանը և թվարկել դրանց տեսակները • Տարբերակել բնական պայմանը բնական ռեսուրսից • Սահմանել ռեսուրսաապահովվածությունը և նշել դրանց տեսակները						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն որ ուսուցումը տեղի է ունեցել							
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա • Տարբերակել բնական ռեսուրսը բնական պայմանից • Տարբերակել բնական պայմանների տեսակները • Տարանջատել բնական ռեսուրսները ըստ առանձին հատկանիշների • Վերլուծել ռեսուրսաապահովվածությունը • Թեմային վերաբերվող խնդիրներ լուծել						

Ուսուցչի զարգացման ընացիկ թիրախներ	**Նպատակներին հասնելու ռազմավարություն**
Պրոբլեմատիկ հարցադրումների, իրավիճակների ստեղծումով զարգացնել և հարստացնել աշակերտների հետազոտական և տրամաբանական կարողությունները	Նախատեսում եմ մտագրոհի, պրոբլեմատիկ հարցադրումների միջոցով նյութի լավ ըմբռնում

Գործողությունները (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ
վՄուտք, ներկա-բացակա - 3ր Սկիզբը – 5ր	Աշակերտները պատրաստվում են դասին: Դասի վերաբերող անհասկանալի հարցեր են առաջադրում ուսուցչին և ստանում դրանց սպառիչ պատասխանները	Մտագրոհի միջոցով հստակեցնում և ամրապնդում է աշակերտների գիտելիքները դասի վերաբերյալ	Ի՞նչ է բնական պայմանը, ինչ տեսակների է բաժանվում Ի՞նչ բնական ռեսուրսը, ըստ որոշ հատկանիշների ինչ տեսակների է բաժանվում Ի՞նչ տարբերություն բնական պայմանի և ռեսուրսի միջև Ի՞նչ է ռեսուրսաապահովվածությունը և այն քանի տեսակ է լինում Ճիշտ սահմանել հասկացությունները: Դրանց արդյունքում ճիշտ լուծե; խնդիրներ
Ընթացք – 20ր	Աշակերտները ներկայացնում են դասը: Դասին մասնակցում են տարբեր կարողունակություն ունեցող աշակերտներ: Յուրաքանչյուրը կատարում է իր կարողություններին համապատասխան առաջադրանք: Աշակերտները իրենք են կազմում դասին վերաբերվող խնդիրները և առաջադրում	Պրոբլեմատիկ հարցերի միջոցով կարողանում է բացահայտել թեմայի վիճելի և առանցքային պնդումները: Քարտեզի օգնությամբ վերլուծել տարբեր վայրերի բնական պայմանների առանձնահատկությունները: Դասի վերաբերյալ խնդիր կառաջադրի և կպահանջի նմանօրինակ խնդիրներ կազմել: Խնդիրները կպչուն թերթիկների միջոցով կբաժանի ավելի լավ կարողություն ունեցող աշակերտներին, նրանք տեղում կլուծեն	

	միմյանց: Այսպիսով գիտելիքը կիրառելի կլինի կյանքում: Դաս պատասխանող աշակերտը խնդիր կգրի գրատախտակին և կվերլուծի:	և ուսուցիչը կստուգի	
10ր	Լսել ուսուցչին և համագործակցել ուսուցչի հետ	Ներկայացնում է նոր դասը, դասին ակտիվ մասնակից դարձնելով աշակերտներին: Քանի որ նոր դասը նախորդի շարունակությունն է: Ուսուցչի կողմից տրվում են հարցադրումներ, պրոբլեմատիկ հարցեր և աշակերտները ինքըստինքնյան ներգրավվում են նոր նյութի ներկայացմանը:	
Ավարտ 5ր		Դասի ամփոփում, տնային աշխատանքի հանձնարարում՝ հիմնականում խնդիրների առաջադր	

Եզրակացություն

Աշխարհագրության ուսումնասիրությունը սովորողներից պահանջում և մեծ հնարավորություն է տալիս լինել նախաձեռնող, հետազոտող, որը հնարավորություն կտա պրոբլեմային իրավիճակների ճիշտ գնահատում և վերլուծում:

Քննադատական մտածողությունն արտահայտվում է այն հատկանիշների և կարողությունների տիրապետմամբ, որոնք պայմանավորում են անձի տրամաբանական մտածողության, գնահատողական վերա- 120 բերմունքի, ռեֆլեքսիայի բարձր մակարդակը: Դիպուկ է բնութագրված հետևյալ մտքում. «Քննադատական մտածողությունը մտածողություն է մտածողության մասին, երբ Դուք դատում եք՝ Ձեր մտածողությունը կատարելագործելու նպատակով» : Կարելի է հավաստել, որ քննադատական մտածողությունն անձի հոգեմտավոր կարողությունների զարգացման, ինքնակատարելագործման, մտագործունեության ակտիվացման կարևոր գործոն է և ժամանակակից աշխարհում կրթության գերակայություն:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում: Ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունենք մի կողմից մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև: Դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման, այնպես էլ էկոլոգիական ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհահայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչվում է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ:

Աշխարհագրության գլխավոր հարցերն են, որտեղ ինչու, և ինչպես: Ուստի աշխարհագրության ուսումնասիրության համար շատ կարևոր է կիրառել

ինքնուրույն մտածողության և ստեղծագործական ունակությունները բացահայտող մեթոդները: Սովորողների մեջ կիրառել պրոբլեմային մեթոդները:

Օգտագործված գրականություն

1. Հարությունյան Գ .Ն ., «Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդներն ուղղված արդի մանկավարժական խնդիրների լուծմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2011թ., էջ 90-92: 9.
2. Հարությունյան Գ .Ն ., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2012թ., էջ 28-33: